Արձանագրություն թիվ 3

2018 թվականի ապրիլի 4-ին Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ 3՝ դասարանի հերթական ծնողական ժողովը,որին մասնակցում էին ծնողներն ու դասվարը:

Օրակարգում՝

1.Ընթացիկ հարցեր:

2.Միջոցառում՝ «Հեքիաթին հյուր»:

3.Էքսկուրսիա դեպի dasaran.am կրթական կենտրոն:

1.Լսեցին՝

Դասվարը ծնողների հետ խոսեց տարվա ընթացքում առաջացած խնդիրների մասին:Երեխաներ կան,որոնք ունեն համազգեստի հետ կապված խնդիրներ : Քանի որ եղանակները տաքացել են,և երեխաները դասամիջոցներին հաճախ դուրս են գալիս դպրոցի բակ,խոսվեց նաև այդ մասին:

Որոշեցին՝

Դասարանում որոշ աշակերտների մոտ առաջացել են խնդիրներ համազգեստի հետ կապված,այսինքն փոքրքցել կամ կորցրել են:Ծնողները պարտավորվեցին լուծել այդ խնդիրը,որպեսզի երեխաները դպրոց հաճախեն պատշաճ տեսքով:
Դասվարը ծնողների հետ միասին որոշեցին ,որ պետք է նս մեկ անգամ երեխաների հետ զրուցել այն մասին ,որ պետք է լինել ուշադիր և խաղալ՝ պահպանելով անվտանգության կանոնները:

2.Լսեցին՝

Դասվարը ծնողներին տեղեկացրեց,որ դասարանի որոշ աշակերտներ մասնակցելու են համադպրոցական միջոցառման,որտեղ պետք է ներկայացնեն Հովհաննես Թումանյանի «Սուտասանը»հեքիաթը և անհրաժեշտ են լինելու որոշ պարագաներ և հագուստներ:

Որոշեցին՝

Պատրաստել անհրաժեշտ պարագաները և երեխաներին ապահովեն համապատասխան հագուստներով:

3.Լսեցին՝

Դասվարը նախօրոք երեխաների միջոցով ծնողներին տեղեկացրել էր ,որ ցանկություն ունի երեխաներին տանելու Dasaran-ում կրթական կենտրոն,որտեղ երեխաների հետ խաղերի միջոցով հետաքրքիր և ուսուցանող աշխատանքներ են կատարվում:

Որոշեցին՝

Ծնողները դասվարի հետ միասին որոշեցին լուծել տրանսպորտի և անհրաժեշտ սնունդի հարցը,որպեսզի երեխաների էքսկուրսիան լինի ապահով:Այդ հարցերով զբաղվելու համար ընտրվեցին մի քանի ծնող,որոնք նույնպես պետք է ներկա լինեին էքսկուրսիային:

Ծնողական խորհրդի նախագահ՝ _____ Ա.Սարգսյան

Քարտուղար՝ _____ Ա.Անտոնյան